

**Հարցաթերթ**  
**Աշխարհագրություն առարկայի 2021 թ. դպրոցական օլիմպիադայի**  
**հանրապետական փուլի**  
**/տևողությունը՝ 150 րոպե/**  
**/գնահատման քայլը՝ 0,25 միավոր/**

**9-րդ դասարան**

1. **Բնական զոնաների վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ..... 1,5 միավոր**
  1. Բառբարը և շշածառը տարածված են հասարակածային մշտադալար, խոնավ անտառներում:
  2. Աշխարհագրական գոտին բնական զոնայի մի մասն է:
  3. Աֆրիկայում բացակայում է տափաստանների բնական զոնան:
  4. Սևահողերը մեծ տարածում ունեն տափաստաններում:
  5. Խառն անտառների զոնայում գերակշռում են պոդզոլային հողերը:
  6. Սավանաներում մեծ տարածում ունեն խոտակերները և գիշատիչները:
  
2. **Աշխարհի արդյունաբերության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ..... 1,5 միավոր**
  1. Արդյունաբերությունը հին ճյուղ է և ձևավորվել է աշխատանքի հասարակական առաջին բաժանումից հետո:
  2. Արդի փուլում արդյունաբերության զարգացման և կառուցվածքային տեղաշարժերի վրա ԳՏՀ-ն մեծ ազդեցություն չի թողնում:
  3. Վերջին տասնամյակներին համաշխարհային արդյունաբերության կառուցվածքում կայուն և արագ զարգացմամբ աչքի են ընկնում մեքենաշինությունը, քիմիական արդյունաբերությունը և էլեկտրաէներգետիկան:
  4. Արդյունաբերությունը ոչ նյութական արտադրության ոլորտի ճյուղ է և ապահովում է հասարակության հոգևոր և կենցաղային պահանջները:
  5. Այժմ աշխարհի բարձր զարգացած երկրները թևակոխել են զարգացման հետարդյունաբերական (հետինդուստրիալ) փուլը:
  6. Արդյունաբերության նորագույն ճյուղերի մեջ մտնում են ավտոմեքենաշինությունը, քիմիական արդյունաբերությունը և ռադիոէլեկտրոնային մեքենաշինությունը:
  
3. **Գրել այն ապարները, որոնք ունեն անօրգանական նստվածքային ծագում..... 1 միավոր**

գրաֆիտ, մարմար, խարամ, կրաքար, կերակրի աղ, տորֆ, կավիճ, կավ, տուֆ, ավազ, գնեյս, տիղմ:
  
4. **Գրել այն բնակավայրերը, որոնք երկաթուղային կայարաններ չեն..... 1 միավոր**

Վեդի, Եղվարդ, Արարատ, Մարալիկ, Աբովյան, Իջևան, Աշտարակ Նոյեմբերյան, Կապան, Դիլիջան, Ալավերդի, Արմավիր:
  
5. **ՀՀ – ում կլիմայի վերընթաց քանի՞ տիպ (գոտի) է առանձնացվում: Թվարկե՛ք դրանք՝ նշելով համապատասխան բարձրությունները..... 3 միավոր**
  
6. **ՀՀ – ում բնակչության տեղաբաշխման քանի՞ վերընթաց գոտի է առանձնացվում: Նկարագրե՛ք այդ գոտիները՝ նշելով դրանց ընդգրկած բարձրությունները, ՀՀ տարածքում և բնակչության թվի մեջ դրանց բաժինը (տոկոսներով կամ մասերով).....3 միավոր**

7. Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 680 մմ է, իսկ օդի ջերմաստիճանը՝ 22° C : Լեռան գագաթին օդի ջերմաստիճանը + 10° C է (հաշվարկը կատարել 6° C - ով): Որոշել ..... 2 միավոր  
 ա/ Լեռան հարաբերական բարձրությունը, բ/ մթնոլորտային ճնշումը Լեռան գագաթին:
8. Երկրի բնակչության թիվը 1 600 000 է, բնական աճի գործակիցը՝ 20 % : Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 31 000, իսկ արտագաղթը՝ 16 000 մարդ: Որոշել..... 2 միավոր  
 ա/ բնակչության բացարձակ աճը, բ/ բնակչության թիվը մեկ տարի հետո:
9. «Մահմանակից երկրներ - լեռներ» գույգորդումներից ընտրել սխալը..... 1 միավոր  
 1. Իսպանիա – Ֆրանսիա – Պիրենեյներ 2. Հնդկաստան – Չինաստան – Հիմալայներ  
 3. Արգենտինա – Պարագվայ – Անդեր, 4. Ուկրաինա – Սլովակիա – Կարպատներ:
10. Շարքերից որի՞ բոլոր պետություններն են գտնվում Կալիմանտան կղզում..... 1 միավոր  
 1. Ֆիլիպիններ, Ինդոնեզիա, Մալայզիա  
 2. Բրունեյ, Պապուա Նոր Գվինեա, Մալայզիա  
 3. Բահրեյն, Վիետնամ, Ինդոնեզիա  
 4. Բրունեյ, Ինդոնեզիա, Մալայզիա:
11. Երկրի օրական պտույտի հետևանքով Պարանա գետը քանդում է իր.....1 միավոր  
 1. հունը, 2. աջ ափը, 3. ձախ ափը, 4. ողողատը:
12. Ո՞րն է Ռուսաստանի Դաշնության վարչատարածքային կառուցվածքի բարձրագույն աստիճանը..... 1 միավոր  
 1. ինքնավար հանրապետությունը, 2. դաշնային ֆեդերալ օկրուգը,  
 3. երկրամասը, 4. ինքնավար մարզը:
13. Արցախի Հանրապետության վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.....1 միավոր  
 1. Պտղաբուծությունն առավել զարգացած է Մարտունու շրջանում:  
 2. Թզենին և նոնենին առավել լավ հարմարվել են ցածրադիր շրջաններում:  
 3. Խաղողագործությունն առավել զարգացած է նախալեռնային գոտում:  
 4. Տեխնիկական մշակաբույսերից առավել տարածված է շաքարի ճակնդեղը: